

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“,
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

Հոգիւսիմէ Գրիգորեան, Գրիգոր քահանայ, Սաթենիկ, Տիգրան, Ռուբէն, Գրիգորեան Շեքսպիրեանները ցաւօք սրտի յայտնում են իրանց ծանօթներին և բարեկամներին՝ առաջինը իր թանկագին բրոշ, երկրորդը՝ իր բեռն և մնացեալները իրանց սիրելի մօրաբորոջ

ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԲԱԼԱՍԱՆԵԱՆԻ

յանկարծակի մահը, որ տեղի ունեցաւ յունիսի 1-ին գիշերվայ ժամը 1-ին: Յուզար-կաւորութիւնը տեղի կունենայ շաբաթ, յունիսի 5-ին, Վելիամինովսկայա փողոց № 3 դէպի ս. Նշան եկեղեցի և այնտեղից Խօշիվանքի գերեզմանատունը:

Նունէ Միքայէլեան Իգիթիսեան, Մարիամ Միքայէլեան Բուրդիկեան իր զստեր-նեղով, Նատալիա Աղեքսանդրեան և Յովհաննէս Միքայէլեան Շալամանները յայտ-նում են իրանց ազգականներին ու ծանօթներին, որ կիրակի, յունիսի 6-ին

Դ Ա Ւ Ի Թ Շ Ա Լ Ա Մ Ե Ա Ն Ի

մահվան քառասունքի օրը պատարագ կը մատուցվի և հոգեհանգստեան կարգ կը կա-տարվի ս. Աւետեաց Ջրբաշէն եկեղեցում: Պատարագն սկսվելու է ժամի 10-ին, իսկ հոգեհանգիստը ժամի 11¹/₂-ին: (շ. Կ.)

Իսահակ Աղաջանեան, Լեւոն Իսահակեան և Մարգարիտ Գրիգորեան Բալասանեան-ները, Սօֆիա Գրիգորեան և Սաշատուր Փանեան Փանեանցները, Յակովբ Գրիգորեան և Եղիսարէթ Աւետեան Տէր-Յովհաննիսեանները որդեկրանցով խորին ցաւով յայտնելով՝ առաջինը իր անփոխարինելի ամուսնու, երկրորդը և չորրորդը սիրելի և անմոռաց մօր, երրորդը՝ իր սկեսրոջ, հինգերորդը իր գործանշի, վեցերորդը՝ իր թան-գագին բրոշ, եօթերորդը՝ իր տալիք և վերջիններն իրանց սիրելի հօրաբորոջ

ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԲԱԼԱՍԱՆԵԱՆԻ

յանկարծակի մահը, որ տեղի ունեցաւ յունիսի 1-ին գիշերվայ ժամը 1-ին, խնդ-րում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել յուզարկաւորութեան, յունիսի 5-ին, շաբաթ, առաւօտեան 9¹/₂ ժամին, Վելիամինովսկայա փողոց, № 3, բնակարան ատամնարոյժ Փանեանի դէպի Ս. Նշան եկեղեցին, և այնտեղից Խօշիվանքի գերեզմա-նատուն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներկայ պայմանների ընաւորութիւնը.—
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր.—ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.
Քաղաքական տեսութիւն.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
«Մուրճի» քննադատին:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

«ՄՈՒՐՃԻ» ՔՆՆԱԳԱՏԻՆ

«Մշակի» խմբագրութիւնը առանձին հատո-րով հրատարակեց Գրիգոր Արծրունու այն յօդուածները, որոնք տպված են Թիֆլիսի պարբերական հրատարակութիւնների մէջ մինչ 1872 թւականը, այսինքն մինչև «Մշա-կի» հրատարակութիւնը:

Դրանք մեծ մասամբ ուսանողական տարի-ների գրուածքներ են: Շատ և շատ հեղինակ-ների երկատարակական գրուածքները սովո-րաբար հրատարակվում են իրեն նիւթ, որից ընթերցողը կամ ըննադատը կարող է եզրա-կացութիւններ կազմել այս կամ այն հեղինակի ընդունակութիւնների, աշխարհայեցողութեան զարգացման մասին: Արծրունու երկատարա-րական գրուածքները լոկ այդպիսի մատենա-գիտական նշանակութիւն չունեն: Նրանք միայն հեղինակի անհատականութեան պատկերը չեն տալիս, այլ և աչքի ընկնող հասարակական նշանակութիւն ունեն այն ժամանակի վերա-բերմամբ, եթէ նրանք տպվում և կարգացվում էին: Տպողները, այսինքն հայ խմբագրները, մեծարում էին Արծրունուն, իսկ կարգացող-ները, այսինքն ժամանակի հայ ինտելիգեն-ցիան, իր համակրութիւնը դէպի հեռու աշ-

ՆԵՐԿԱՑ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

Պատերազմական բեմում թէև վերջե-րուած գեռուողի չունէին աչքի ընկնող խո-շոր զօրաշարժեր, բայց պատերազմող կող-մերը այնքան ուժեղ են, որ շուտով կա-րող է ինքն սպասողական դիրքից անց-նել ներքործակալի և մեծ ձակառա-մարտներ տալ միմեանց: Ներգործական քայլեր անելու համար զօրաւորութիւն է

խարհներում ապրող անծանօթ ուսանող Արծ-րունին նոյն իսկ ցոյցերի էր հասցնում:

Կան մէկից աւելի հրապարակական փաստեր, որոնք ապացուցանում են թէ Արծրունու յօ-դուածները, մտքերը խոր տպաւորութիւն էին թողնում հասարակութեան վրա և այն ժամա-նակ, երբ «Մշակ» չէր կար, երբ նրանք տպ-վում էին Ստեփանի ընդհանրապէս շատ աղ-բատ և քիչ տարածված «Հայկական Աշխարհի» մէջ: Այդ խոր տպաւորութեան պատճառները հասկանալի դարձնելու համար մի կողմից պէտք է թափանցել Արծրունու յայտնած մե-րկերի մէջ, պէտք է տարբարութիւն նրանց, իսկ միւս կողմից պէտք է ուսումնասիրել այն ժա-մանակվայ մեր գրականութիւնը, մամուլը, հասարակական կեանքը: Գրականութիւն—այս բառի ընդարձակ մտքով—դեռ չէր կար: Կար միայն մի կիսակենդան մամուլ, որ մի կերպ գոյութիւն էր պահպանում, չէր կարողանալով ազդել մարերի վրա, հետաքրքրութիւն դա-րեցնել, մի խօսքով՝ խօսեցնել մարդկանց միտքը:

Եւ երբ այսպիսի մի ժամանակ, այսպիսի մի միջավայրում մենք տեսնում ենք համա-կրութիւն, յարգանք, վէճ ու հետաքրքրութիւն միայն մի անուան—Գրիգոր Արծրունու ա-նուն—շուրջը, դա նշանակում է թէ նրա գրուածքները մի առանձին, կարելի է ասել՝ արտակարգ նշանակութիւն ունէին ժամանակի հայ ինտելիգենցիայի համար: Ուրեմն, դրանք իսակ, անմարսելի, ժամանակի ողոր հետ ոչինչ

առաջացնում պատերազմական բեմի ներ-կայ գրութիւնը: «Ноб. Вр.» լրագիրը ո-րոշ հետաքրքրութիւն և արժէք է տալիս «Neue Freie Presse» լրագրի ռազմագէտ աշխատակցի խորհրդածութիւններին, ո-րոնց հետ նպատակայարմար ենք գտնում ծանօթացնել մեր ընթերցողներին:

Անգլիական լրագիրները մի քանի ժա-մանակ առաջ լուրեր հաղորդեցին, որ իբր թէ գեներալ Կուրօպատկինի զօրքը զիտաւորութիւն ունի շարժվել դէպի հա-րաւ ազատելու Պորտ-Արտուրը: Այդ լու-րերը ճշդ չեն, ինչպէս սխալ են և այն լուրերը, որ իբր թէ Կուրօպատկին հապօնա-կան զօրքը ներկայումս շարժվում է դէ-պի հիւսիս՝ կարելու Խաղթինի ճանապար-հը: Այդպիսի գործողութիւններ ներկայ հանգամանքներում նպատակայարմար չէին կարող լինել և անա ինչու: Եթէ Կուրօ-պատկինի զօրքը անցնի դէպի հարաւ, այն ժամանակ նա կարող է կորսել իր գլխաւոր լինակէտ Լաօնայից և այդպի-սով հնարաւորութիւն տալ եսպօնացի-ներին յարձակվելու նրա թեւերի վրա: Լաօնայից մինչև Յիլինժօու մօտ 300 վերստ է կամ 15—20 օրվայ ճանապարհ: Եթէ նոյն իսկ այդ երեք շաբաթվայ ար-շաւանքը աշողութիւն ունենար, այն ժամանակ Կուրօպատկինի զօրքի զիմաց առաջ կը գալիս Նանգուանշինի ամուր դիրքերը, որոնք այժմ Օկուի ձեռքումն են և ուժեղացնվում են: Իսկ միւս կող-մից սպանական զիբը կը բռնէր Կուրօ-կիի զօրքը, որ հսկում է ռուսաց բանա-կի շարժումների վրա և սպասում է յար-մար առիթների իր գործողութիւնների համար:

Նոյնպէս անհաւանական է, որ այժմ, ներկայ պայմաններում, Կուրօպատկին շարժ-վի դէպի հիւսիս: Այդպիսի շարժում ա-նելու համար նրա ոյժը դեռ թոյլ է: Ա-պագայում թերեւ եսպօնացիները գոր-ծադրեն այդ ծրագիրը, երբ, օրինակ, մի-ջոցներ ձեռք անված կը լինեն կանգ-նեցնելու ռուսական զօրքի շարժումները Վլադիվոստօկի շրջանում, կամ Օկուի կաշողվի վերջինը Պորտ-Արտուրը և իր զօրքը ուղարկել հիւսիս Կուրօպատկինի ձեռք:

Պորտ-Արտուրը այդպիսով բանալիի դեր է խաղում ներկայ հանգամանքնե-

կապ չունեցող յօդուածներ չէին: Երբ խօսում են խորհր հետք թողած մի գրական գործիչի մասին, սովորաբար վերցնում, լուսաբանում են նրա ժամանակը, այդ ժամանակի հասա-րակական հոսանքները, ոգևորող գաղափար-ները և այդ երկուքների տեսակէտից են ըննա-դատում և գնահատում գործիչին: Պիտաբվը սարսափ պիտի պատճառէ մօզեոն էսթէտիկ-ներին, գեղասէրներին, արուեստ պաշտողնե-րին: Բայց իր ժամանակի շրջանում ինչքան լաւ ու փառաւոր է նրա դիրքը: Եւ ժամանա-կակից գործը ոչինչ անյարմարութիւն չէ գրում դնելու Պիտաբվին՝ նրան պատկանող միջա-վայրին և հիմնաւոր նրա ընդունակութեան ու տաղանդի վրա: Այսպէս և շատ հեղինակներ:

Այսպէս չէ վերաբերվել Գրիգոր Արծրունու աշխատութիւնների առաջին հատորին «Մուր-ճի» քննադատ պ. Տ. Յովհաննիսեանը: Ընդդէմ է, նա ասում է թէ մտադիր է աւելի ընդար-ձակ ուսումնասիրութիւն գրել Արծրունու մա-սին և առ այժմ բաւականաճանաչ է թուոցիկ նկատողութիւններով, բայց ամեն բան, որքան էլ նա պատահական, թուոցիկ լինի, պիտի իր մէջ ճշմարտութիւն պարունակէ: Մենք պարտք ենք համարում արձանագրել այստեղ պ. Տ. Յովհաննիսեանի քննական մեթօդի անբաւա-րարութիւնը, մասնաւորապէս սխալները, որոնք գուցէ չափազանց արաղ «Թուոցիկութիւնից» են առաջացել, հետեւաբար և ցանկալի է, որ չը կրկնվեն նրա մանրամասն ուսումնասիրու-թեան մէջ:

րում: Եւ հարցը նրանումն է, թէ որքան ժամանակ նա կարող է դիմանալ պաշար-ման: Անշուշտ, չը կայ բերդ, որը վերջ է վերջոյ չը վերջով: Եւ բերդերի գլխա-ւոր նպատակներից մէկն էլ հէնց այն է, որ նրանք կենսործնացնելով իրանց շուրջը թշնամիների բազմաթիւ զօրքերը, թու-լացնեն նրանց ոյժերը՝ պատերազմական բեմի միւս մասերում: Պորտ-Արտուրը ներկայումս շատ ուժեղ է և ուժեղացնու-թիւններից շատ չէ մնալով, ունի բա-ւականաչափ ռազմամթերք և ուստիւր պաշար գիմադրելու համար և կարող է պաշարված գրութեան մէջ մնալ երկար ժամանակ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիկական և վիճակագրական կօմիտէի վիճակագրական բաժնի համար այս տարի նշակված է 8,800 ռուբլի ծախս:

Պետերբուրգի և Վարշաւայի իրար հետ հեռա-խօսով միացնելու հարցն արդէն վերջնականա-պէս վճռված է դրական մտքով և շուտով կը սկսվեն դրա համար անհրաժեշտ աշխատանք-ները:

Մենք յայտնել էինք, որ Ալեքսանդրօպօլի շրջանում ներկայ ամառվայ ընթացքում պէտք է գործէ շրջիկ կաթնարան և ծանօթացնէ գիւղացիներին կատարելագործված կաթնա-տնտեսութեան հետ: Կիրակի, յունիսի 6-ին, Ալեքսանդրօպօլում նշանակված են երկու դա-սախօսութիւններ, որոնց ժամանակ թէ գործ-նականապէս փորձեր կանվին գործիչների մի-ջոցով և թէ կը տրվեն բացատրութիւններ զանազան անտեսական հարցերի վերաբերու-թեամբ: Դասախօսութիւնները տեղի կունենան քաղաքային վարչութեան դահլիճում: Դասա-խօսութիւնները ձրի են և յարմարեցրած են ընդհանուր հասկացողութեանը: Առաջին դա-սախօսութիւնը տեղի կունենայ ժամի 11-ին մեծ մասամբ գիւղական դասակարգի համար, իսկ երկրորդը, կէսօրից յետոյ, ժամի 5-ին, թէ գիւղական և թէ առհասարակ բոլոր հե-տաքրքրվողների համար: Ալեքսանդրօպօլի դա-սախօսութիւնները, ուստի շրջիկ կաթնարանի գոր-

Նախ և առաջ կը նկատենք մի ընդհանուր պակասութիւն:

Երբ խօսք է լինում հիմնական, նշանաւոր հարցի, սկզբունքի նշանակութիւն ունեցող հանգամանքի մասին, այնտեղ բառեր չը պէտք է գործածել, այլ փաստեր: Պ. Տ. Յովհաննի-սեան իր յօդուածի մէջ մի երկու անգամ ա-նուանում է Արծրունու ազատամտութիւնը ծայրայեղութիւններ, միակողմանիութիւն պա-րունակող: Մենք ուշադրութիւն դարձրինք այդ բանի վրա այն պատճառով, որ պ. Տ. Յով-հաննիսեանը առաջին անգամ չէ, որ այդ բառերը շարուն է լրբերալիովի կողքին. նոյն «Մուրճի» էջերից, եթէ չենք սխալվում, մի երկու անգամ էլ նա անուանել է լրբերալիովը և ծայրայեղութիւն, և միակողմանիութիւն, և անհեռաւտութիւն:

Բառեր են դրանք, որոնք բառեր էլ մնացել են և մնում են: Այսքան ժամանակ պ. Յով-հաննիսեանը ներդրութիւն չը կրեց փաստերով ապացուցանելու «Մուրճի» ընթերցողներին լրբերալիովի այդ յատկութիւնները: Միջոցաւ շատ և շուտ հարկաւոր էր դա: Երբ ցոյց էք տալիս բացասական, անհամակրելի երկոյթը, դուք պիտի ցոյց տաք և այն, ինչ, ձեռ կար-ծիքով, փրկութիւն է մարդկային ազգի հա-մար: Ծայրայեղութիւնը վատ է—ապացուցէք, դէք մարդկանց առջև այն չափաւորութիւնը, որից մեղրի ու կաթի աղբիւրներ են ըլկում: Մարդկութիւնը իր համար երջանկութիւն է որոնում. լրբերալիովը կարծի է թէ ինքը ցոյց

ծնունդը և անհատի կարող է և անհատի օգուտ հասցնել գաղափարի ազդեցությանը:

«Прав. Вѣст.»-ում տպված է. «1904 թվ. մայիսի 28-ին: Ի նկատի առնելով «С. Пет. Вѣд.» լրագրի «Նկատողություններ» վերնագրով յօդուածները (№ №. 135 և 187, մայիսի 20 և 22-ին), որ իդուր վրդովեցին հասարակական կարծիքը, ներքին գործերի մինիստրը, մասնավոր մասին եղած օրենսդրութեան 1890 թվ. հատարակութեան օրենսգրքի XIV հատորի 144-րդ յօդուածի հիման վրա, որոշեց. յայտնել «С. Пет. Вѣд.» լրագրին երկրորդ նախագրութեան յանձին նրա հրատարակչին՝ իշխան Էսպեր Ուխտամանուկ և խմբագրին՝ ազնական Ալեքսանդր Ստոյկակին:

Պ ե տ ե բ ու ռ գ ի քաղաքային նախնական կրթական գործում ներկայ ուսումնական տարվայ սկզբից ներմուծվում են երկու խոշոր բարենորոգումներ. առաջին՝ բոլոր սաներն ազատվում են մի քանի բուրդի տարեկան ուսման վճարից, որ տալիս էին բոլորը, և, երկրորդ՝ այլ և քաղաքային դպրոցներում աշակերտներին չնդունել չէ կարելի տեղի պահանջներին և այլ պատճառներով—բոլոր խնդրատուները պէտք է ընդունվեն պարտաւորապէս:

«Русь» լրագիրը գրում է. «Մեր երկաթուղիների ընդհանուր չափն է 55,200 վերստ, և նրանց վրա գործող ծառայողների թիւը 300,000 հոգուց աւելի է: Այն ինչ դրանցից միայն ամենաշնչին մասը—2—3%-ը միայն,—ստացել են մասնագիտական կրթութիւն երկաթուղային դպրոցներում: Նոյն իսկ մերենավարների և նրանց օգնականների մէջ այդ դպրոցն աւարտողների թիւը հազիւ 10%-ի է հասնում: Ներկայումս հաղորդակցութեան ճանապարհների միջոցով ձեռք է առել միջոցներ, որ երկաթուղային դպրոցների թիւը աւելացիւ և նրանց մէջ հնար եղածի չափ բազմաթիւ սաներ ընդունվին:

Գ ր ա ն ձ ա կ ի յ գրում են «Нов. Об.» լրագրին. «Մայիսի 25-ի գիշերը, ժամը 2-ին, Արամովիչ պրիստաւի հրամանով 20 ստորաթիկներ շրջապատեցին «Բոլշե-բելա» փողոցում այգիի տիկին Մարգարիտ Եսայիբեկեանի տունը, ուր թաղանթ էր մի դասակարգ կամ փախած գիւնուր: Պրիստաւի և ժանդարմի օգնիկների պահանջին—գուռը բաց անել իսկոյն—մի քիչ դիմադրութիւն արին ներսից: Իսկ երբ գուռը բաց արին, տանը՝ բացի այրիից և երկու անչափահաս աղջկաներից՝ ոչ ոք չէր կար: Փախուստ կանգնող կարողացել էր արդէն դուրս գալ թուղի պարտէզը, ուր՝ մի քանի օղակ յետոյ հրացանաձգութիւն լսվեց: Երևաց, որ փախուստականը, փախչելով պարտէզ, հանդիպել էր ստորաթիկներին, որոնք այնտեղ թագ էին կացել: Փախուստականն սկսեց կրակ անել: Ստորաթիկներից մէկը թեթեւ վէրք է ստացել:

Կը տայ այդ երջանկութիւնը: Պ. Յովհաննիսեան գիտէ, որ լիբերալիզմը չափազանցութիւն է, ծայրայեղութիւն է. նա, ուրեմն, գիտէ և իսկական երջանկութեան աղբիւր չափաւորութիւնն ու միջինը, բայց չէ ցոյց տալիս նրան:

Բայց որքան հեշտ էր մի այդպիսի բան անել: Մի ամբողջ հատոր էր գրված նրա առջև. կարող էր մի քանի նախադասութիւն արտաբերել նրանից, կարող էր գոնէ գրել մի քանի երեսները ցոյց տալ, որպէս զի ընթերցողը իմանայ թէ պ. Յովհաննիսեանի համար ինչն է ծայրայեղութիւնը: Եւ դուրս է եկել մի շատ ցաւալի գրութիւն: Գրիգոր Արծրունու անթիւ հակառակորդները շարունակ այդ բառերն էին գործ ածում—չափազանցութիւն, ծայրայեղութիւն: Բայց չեն կարողացել համոզել, որ ճիշտ են գործարարում այդ բառերը: Միթէ պ. Յովհաննիսեանը միայն կրկնում է հին, մաշված բառերը: Չենք ուզում հաւատալ:

Պ. Տ. Յովհաննիսեան Արծրունու յօդուածներին մասին ասում է, թէ դրանք «մեծ մասամբ դուրի են գրական արժանաւորութիւնները», թէ տեղ-տեղ նրանք նոյն իսկ աշակերտական շարագրութիւնների տպաւորութիւն են գործում: Այս գովառուող ոճը չը պիտի գայթակղեցնէ մեզ: Մի քանի տող յետոյ պ. Յովհաննիսեան, այն էլ բոլորովին դրական կերպով, ասում է թէ ամբողջ հատորի մէջ միայն մի յօդուած կայ, որին ինքը հաւանում է: Հաւատարմով պ. Յովհաննիսեանին, պէտք է

ձեռքին, միւսը ծանր՝ փորին: Փախուստականն անյայտացաւ: Հարցաքննութիւնը ցոյց տուեց, որ փախուստականը Գրանակի բնակիչ է, դասակարգ գիւնուրական՝ Լեոն Արամեանց, որ ահա 14 տարի է ծածկվում է դանազան քաղաքներում:

Ստացանք հայերէն «Այս ալ վարդի» նոտագրած երգը, յարմարեցրած երգիչու և դաշնամուրի ներդաշնակ նուագման համար: Թոքերը պատկանում են Ա. Իսահակեանին, իսկ երաժշտութիւնը Գր. Միրզայեանին: Երաժշտութիւնը գրան է երեք էջ, տպված է Պետերբուրգի Պուշկինեան տպարանում և արժէ 35 կոպէկ:

Կ ա զ ա ն քաղաքի լրագիրները մի շատ միջոցաւորական և ուրախաւիթ լուր են հաղորդում: Կազանի ուսումնական շրջանի պ. հոգաբարձուն գիտէ, թէ իր իրաւասութեան տակ զետեղած բոլոր ժողովրդական դպրոցների տեսչներին և խնդրի, որ նրանք բարեհաճեն ներկայացնել իրանց կարծիքներն ու դատողութիւններն այն մասին, թէ արդեօք հնարաւոր է ներմուծել ընդհանուր պարտադիր տարրական կրթութիւն, թէ այդ բանի համար որքան միջոցներ են հարկաւոր. յարաբերութեան մէջ մտնել քաղաքների և գիւղերի վարչութիւններին հետ և իմանալ, թէ նրանք ինչ ներթական մասնակցութիւն յանձն կանեն, թէ այդ ցանկալի միջոցի իրականացմանը ձեռնարկելու լինին:

«Касиѧ» լրագիրը հաղորդում է, որ Բազուի վրայով անցել են զէպի Գրանակի նահանգը մի քանի չիկսեր, որոնց նպատակն է մասնաւոր հողատէրերից գնել 1000-ի չափի դեպիտոնի հող՝ վրան գաղութ հիմնելու համար: Եթէ այդ փորձն աշդով, ներկայ տարվայ աշնանը Գրանակի նահանգը կը գաղթեն 150 ընտանիք չիկսեր:

Ախալքալաքի գաւառի Մեծ-ՆիշնՉԱՆԻ գիւղից մեզ գրում են. «Մեր գիւղում, մայիսի 30-ին, ամբողջ ծանրութիւնից կտուրը փուլ եկաւ և մարդիկ մնացին հողի տակը, բայց շուտով օգնութեան հասան և ազատեցին. վրտանքը անջնաւ անցաւ: Սա առաջին դէպքը չէ, բայց և այնպէս գիւղացիները չեն խառնվում: Եթէ մի տան մի քանի մարդիկ իրանց համար քէֆ են անում, այնտեղ, կտրանք սկսում են հաւաքել ձիւ, տղայ, կին և աղջիկ անխորթ. մայրերը, որոնց պարտքն է կրթել իրանց երեխաներին, տեսնում են զբերել իրանց երեխաներին, գնում կանգնում են քէֆ անողների մօտ: Շատ զգուշի սովորութիւն է, որից յաճախ ֆնամով ենք: Այդ օրն էլ մի աղջիկ հարս էին տանում, որի պատճառով մեծ բազմութիւն էր հաւաքված փոստ երգիկի վրա:

զարմանալ, թէ ինչպէս էր որ այդ «աշակերտական շարագրութիւնները» այնքան խոր տպաւորութիւն էին թողնում ընթերցողների վրա, այնպիսի ֆուրոր էին պատճառում: Թող պ. Յովհաննիսեանը բարեհաճէ մեզ ցոյց տալ թէ 1865—1871 թվականներին շրջանում որ հայ գրողն է այդպիսի ընդունութեան արժանացել, այդքան համակրանք վաստակել, այդքան խօսեցնել տուել իր մասին: Երկուսից մէկը. կամ այն ժամանակվայ հայ հասարակութիւնը երեխաներից էր կազմված, կամ թէ մենք չենք կարողանում ըմբռնել Արծրունու յօդուածների արժանաւորութիւնը: Երեւ խայտութեան վկայական տալ հասարակութեան մենք չենք կարող: Դրա դէմ կը բողոքէր այն համալսարանական երիտասարդութիւնը, որ 1869 թվ. յունվարին, մի ճաշի ժամանակ, ոգևորված խմում էր Արծրունու կենացը՝ նրա գրական գործունէութեան համար: Միւս համալսարանականների ցոյցերը չենք բերում:

Մնում է, ուրեմն, երկրորդ կէտի վրա կանգ առնել: Այստեղ մենք նախ և առաջ գործ ունենք պ. Յովհաննիսեանի «գրական արժանաւորութիւններ» խօսքերի հետ: Տարբարաբար, այստեղ էլ, ինչպէս յօդուածի միւս տեղերում, միայն բառեր են, փաստ չենք տեսնում, որպէս զի իմանանք թէ ինչ է հասկանում «Մուրճի» ընկալողը այդ խօսքերով: Ինքներս չենք կարող ասել, թէ Արծրունին իր ժամանակակիցներից վատ էր գրում: Եւ առաջարկում ենք պ. Յովհաննիսեանին ստուգել մեր այս կարծիքը, աչքի անցկացնելով

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՌԻՉԸ

Ռուսները մաքրում են Պորտ-Արտուրի մութը: Նախապիկից եկած տեղեկութիւնների համաձայն, ռուսները գործունէալ կերպով աշխատում են այժմ մաքրելու Պորտ-Արտուրի մութը, որպէս զի յարմար օդակին դուրս գան այդ տեղից: Կարծում են, որ 18 խոշոր նաւեր և 17 ականանաւեր կարող են դուրս գալ ծովը: Ինչպէս երևում է մի ուրիշ հաղորդագրութիւնից, որ ստացվել է Տոկիոյում, եսպոնացիները մեծ դազմագիտական նշանակութիւն են տալիս Միւսանի և Սայմաձգիի գրաւման: Նրանց կարծիքով, ունենալով իրանց ձեռքում Սայմաձգին, նրանք կարող են Մօտիէի սարերի ետևն անցնել, որոնք լուս ամբարցված լինելով, անմերձեանալի են հանդիսանում: (T. A.)

Պորտ-Արտուրի մասին տեղեկութիւններ: «Daily Express» լրագրի թղթակիցը հաղորդում է, որ նա մանրամասն տեղեկութիւններ է ստացել Պորտ-Արտուրի մասին Սակուի անունով մի չինացի վաճառականից, որ նոր է վերադարձել Վէյսայլէյից: Ի հարկէ, դժուար է ասել թէ որքան ճշմարտութիւն կայ նրա խօսքերի մէջ: Մի ինչ որ յանցանքի համար այդ չինացին դատաւարուցեց բերդային աշխատութիւնների, բայց կարողացաւ փախչել: Նրա խօսքով, ամբողջ ժողովուրդը աշխատում է, դաշտակներով և բաներով: Բոլոր տեսակները գրաւված են գիւնուրական իշխանութիւնների կողմից: Սաստիկ պատիժ է տրվում նրանց, որոնք թագնում են պաշարներ: Կաթ և շաքար շատ քիչ կայ: Թարմ կանաչիկն ամենևին չը կայ: Կոստերիկից բերվում ամեն օր ամեն մէկին երկու ունցիա է տրվում: Ձէնքերը և վառարանները տարվել են ցամաքը: Գիշեր և ցերեկ աշխատում են խրամատների վրա, որոնք բազմաթիւ շարքերով շրջապատում են գրքից բերդը: Գինեւրալ Սոնսսելը ոգևորում է պահակախումբը հայրենասիրական ճառերով, որոնց զօրքերը պատասխանում են ցնծալից ուրախելով և աղաղակում են: «Անճախատը չենք լինի»: Ձինացիները դարձեալ սկսել են կոչել Պորտ-Արտուրը նրա չինական անունով, բայց գինեւրալ Սոնսսելը խստաբար արգելում է այդ: (Рус. Вѣд.)

Ինչ վստճ Ե Երկայացնում Պորտ-Արտուրի առումը Ռուսաստանի համար: «Daily News» լրագրում տպված է լրագրի ներկայացուցչի խօսակցութիւնը յայտնի գիտնական ռազմագետ-գրող զօկտոր Միլլէր Մահիւրի հետ: Վտանգը Ռուսաստանի համար—ասել է նա—կայանում է նրա մէջ, որ Պորտ-Արտուրի աղաւթն է չափազանցված նշանակութիւն կը ստանա և հասարակական կարծիքի առաջ երկրի պատճառով զօրքը կը փախանայ նահանգի: Բերդերի վերաբերմամբ ինչ որ մի նախապաշարունակ է կազմվել, որ շատ մեծ բանակների կորստեան պատճառ է դարձել:

1865—1871 թվականների հրապարակախօսութիւնը: Մենք նոյն իսկ համոզված ենք, որ ուշագրութեամբ ուսումնասիրելով այդ հրապարակախօսութիւնը, պ. Յովհաննիսեան կը խոստովանէ, որ Արծրունին մտածութեան ձեւերի և արտայայտութեան մէջ աւելի բարձր էր կանգնած ոչ միայն իր ժամանակի աշխատակից-հրապարակախօսներից, այլ և նոյն իսկ այն խմբագիրներից, որոնք հիւրընկալում էին նրա յօդուածները: Դժբախտութիւնն այն է, որ պ. Յովհաննիսեան զննում և վճիռներ է արձակում առանց համեմատութիւնների, առանց ժամանակի ի նկատի ունենալու: Միթէ նոր պայցոյցների կարօտ է, որ վաթսուհական թվականների վերջում մենք մշակված, հարուստ լեզու չունէինք, որովհետեւ համարեա չունէինք և գրականութիւն...

Գալով այն բանին, որ պ. Յովհաննիսեան հաւանում է միայն մի յօդուած, կասենք որ շատ ճիշտ է ասված, թէ ճաշակի մասին չեն վիճում: Պ. Յովհաննիսեանը միակ արժանաւոր բան համարում է Արծրունու մի թղթակցութիւնը, որի մէջ նա նկարագրում է Միխիթար Սեւաստայանը հանդէպստ Մ. Զապալի Միխիթարեան վանքում: Միթէ ուրիշ ոչինչ չը կայ: Իսկ «Գրականութիւնն չը կայ», «Շատ բանակներ թէ ոչ», «Բարոյականութեան արտօնութիւն», «Մտքի յայտնելու իրաւունք», «Մէկ մէկին մեղադրում ենք», «Բաւական չէ» յօդուածները, «Նամակ դէպի խմբագրող», որոնց մէջ Արծրունին ամբողջ պրօգրամ է պարզել, իր ամբողջ աշխարհայեցողութիւնն է

Ինչպէս նաւատորմը ամենից շատ ապահով է բաց ծովի վրա, նոյնպէս և ցամաքային զօրքը ամենից քիչ խոցելի է դաշտի վրա: Բերդը հեշտութեամբ կարող է դառնալ այն զօրքի գերեզմանը, որ շատ մեծ յոյսեր է դնում անշարժ պարիսպների ոյժի վրա: Եթէ ռուսները այժմ գնան Պորտ-Արտուրի ազատութեան, նրանք կը կրկնեն Պալիկասի սխալը 1870 թվ.ին, որը հրամայեց մարշալ Մաք-Մահօնին, որ Պարիզից նահանջել էր դէպի Օրլէան, գնալ պաշարված Մէյի օգնութեան: Մաք-Մահօնը հնազանդեց և զոհեց իր բանակը՝ ապարդիւն փորձ անելով ազատել բերդը, որ Ֆրանսիայի համար տանապատիկ աւելի մեծ նշանակութիւն ունէր, քան Պորտ-Արտուրը Ռուսաստանի համար: Օգոստոսի 23-ին Մաք-Մահօնը շարժվեց իր բանակով, որ բաղկացած էր 144 հազար հոգուց, 400 թնդանօթներէ, իսկ 9 օրից յետոյ, սեպտեմբերի 2-ին, իր ամբողջ բանակով գերի ընկաւ: Այն հարցն ունէր, ինչպէս է կարծում, պէտք է որ Կուրօպատկինը նահանջէ, Մահիւրը պատասխանեց. «Անկասկած: Արշաւը զօրեղագոյն թշնամու դէմ, որ գրաւել է նեղ պարանոցը, կատարեալ անտուրիւն կը լինէր: Բերդը իր սեփական ոյժերին թողնելը յաճախ ամենալաւ քայլն է ընդհանուր հրամանատարի կողմից:» (Нов. Время)

Ձինական ժողովուրդի վարմունքը: Լեաօեանից հաղորդում են, որ չինական ժողովուրդը Պայչէնից դէպի հարաւ, տեղեկութիւններին ճշման տակ, որոնք, ըստ երեւոյթին, որոշ հրահանգներ են ստացել Պէկինից, բռնել է տաւարը հեռաւոր տեղեր, սարերը, այն նպատակով, որ թագնեն ռուսներից և խափանեն գնին: Գարու և յարկի պաշարները նոյնպէս թագնում են, թաղում են հողի տակ, վկաների բացակայութեան ժամանակ: Սակայն անհատները մեծ պատրաստականութեամբ ծախում են ռուսներին բոլոր հարկաւոր բաները: Արժանահաւատ տեղեկութիւններով, եսպոնացիներ ակնայայտ կը յայտնեն մի քանի անգամ գիշերով մօտեցնել Ստուրերին այն նպատակով, որ ականներ ձգեն արտաքին նաւակայանում: Այդ կը յայտնեն ինքն ինքն խորատուգլած է մայիսի 26-ի գիշերը, ափնայ բատարէաներից արած աղոյ հրաձգութիւնից: (T. A.)

Նապոմացիները օգնութիւն են ստացել: Բէյտէրի գործակալութեան թղթակիցը գինեւրալ Կուրօպիի գլխաւոր բանակատեղում հեռագրում է Յուզանի վրայով. «Ներկայումս շարունակվում են պատրաստութիւնները և հետաքրքիր լուրեր հաղորդել չէ կարելի, որովհետեւ նրանք կարող են տալ յենակէտ ապագայ շարժումների վերաբերմամբ:

Ռուսաց գլխաւոր բանակատեղից Լեաօեանում հաղորդում են մայիսի 29-ից, որ չինացիների պատմածով, եսպոնացիները Պորտ-Արտուրի մօտ մեծ օգնութիւն են ստացել: Ենթադրում են, որ փորձեր են լինելու գործնալ բերդի վրա, հէնց որ եսպոնացիները այնքան կուժեղանան, որ փակեն բերդը ցա-

ղեր... Գրական խոշոր գործիչի նախապատրաստական շրջանը պատկերացնելու համար աւելի ինչ առատ նիւթ էր հարկաւոր:

Պ. Յովհաննիսեան գանգատվում է լիբերալիզմի միակողմանիութեան վրա, բայց ինքը որքան միակողմանիութիւն է ցոյց տալիս իր քննադատութեան մէջ: Նա ասում է, որ «Երկուսից ոճրն է լաւը» յօդուածի ամբողջ առաջին կէտը թարգմանված է Տէնից և Արծրունին չէ յիշել թէ դա թարգմանութիւն է: Նախ և առաջ՝ դա թարգմանութիւն չէ՝ բառի բուն մտքով: Արծրունին համարեա իր խօսքերով պատմել է Տէնի տեսութիւնը: Նա, ի հարկէ, պարտաւոր էր յիշել իր աղբիւրը: Բայց, թերթիւով ամբողջ հատորը, կարելի է ասել թէ դա սխալմունքի արդիւնք է, որովհետեւ Արծրունին վերին աստիճանի բարեխիղճ է ցրտատուների վերաբերմամբ և նրա յօդուածների տակ դուր գտնում էր բազմաթիւ հեղինակների (հայ թէ օտար) անունները: Պէտք է ասել, որ այդ բարեխիղճութիւնը շատ էլ սովորական մի առաքելութիւն չէր այն ժամանակներից: Պ. Յովհաննիսեան պարտաւոր էր յիշատակել այն հանգամանքը: Աւագրութիւնը բարձրելով մի պակասութեան վրա, նա կարող է ընթերցողին գցել այն մոլութեան մէջ, թէ Արծրունու համար այդ միջոցը նոյնքան սովորական էր, որքան 50-ական և 60-ական մեր հեղինակներից շատերի համար:

(Կը շարունակվի)

մաքից և կարող կը լինեն մի և նոյն ժամանակ պաշտպանվել կրակից, երբ ուռնները գործարարներ կուղարկեն հիւսիսից: Կուրսիքի գլխավոր բանակը դեռ գտնվում է Ֆինլանդիայի Ռուսաց առաջապահ կայանները ծածկում են աջ թևը Սայմաձիւի շրջանում և շարժվում են դէպի արեւելք: Այդ կայանները միշտ շփվում են թշնամու հետ և գրեթէ ամեն օր տեղի են ունենում աւելի կամ պակաս լուրջ ընդհարումներ: (Տ. Ա.)

ԳԱՂԱՎԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեր նախորդ տեսութիւններէ մէջ, խօսելով ասիական թիւրքիայի հայաբնակ նահանգների վիճակի մասին, եկել էինք այն եզրակացութեան, եւրոպական և ռուսաց լրագրողները հազորդած տեղեկութիւնները հիման վրա, թէ գլխավորապէս Ռուսաստանը և Աւստրիան, աջակից ունենալով նաև Ֆրանսիան և Անգլիան, լուրջ կերպով պէտք է զբաղվեն լուծել և հաղկելու հարցը, ստեղծելով հայաբնակ նահանգներին համար այնպիսի մի կազմակերպութիւն, որ, հայթայթելով թշուառ բրիտանիայ ժողովրդին կենսելի, գոյքի և պատուի ապահովութիւն, վերացնէ խռովութիւնները և ապաստանութիւնների պատճառը: Վերջին պատուով ստացված լրագրողները, հաստատելով այդ ենթադրութիւնը, աւելի ուրիշ ցուցմունքներ են տալիս և յայտնում են նոյն իսկ, թէ ինչ տեսակ կազմակերպութիւն է ենթադրվում Հայաստանի համար:

«Վիեննայի և Պետերբուրգի կաթինէտների միջև, ասված է մի լրագրում — ներկայումս կառարկում է կարծիքների փոխանակութիւն թիւրքա-Հայաստանի խաղաղացնելու վերաբերմամբ: Դիտարկութիւն կայ առաջարկել մեծ պետութիւններին Հայաստանը խաղաղացնելու մի նախագիծ՝ նման Մակեդոնիայի բէ-ֆորմիների ծրագրին, այն է ի նկատի կայ հաստատել յատուկ հայկական ժամադրմէրիս, հետագային գնալով ազգութիւններից հրապարակած օֆիցէրների հրամանատարութեան ներքոյ:

Միւս կողմից Բերլինի «Tageblatt» թերթը գրում է հետևեալը. «Հայերի վիճակը Փոքր-Ասիայում քննութեան առարկայ դարձաւ բրիտանական պարլամենտի ստորին խորհրդարանում: Արտաքին գործերի մինիստրի օգնական Յորդ՝ Պէրսի հայերի մէջ ծագած խռովութիւնների մասին եղած հարցապնդումին պատասխանելով յայտնեց, թէ թիւրքաց կառավարութիւնը ստացել է Կ. Պոլսի անգլիական դեսպանից առաջադրութիւն, որի մէջ պատուիրվում է նրան միջնորդ հրաւիրել անգլիական, ֆրանսիական և ռուսական հիւպատոսներին: Անգլիական և ֆրանսիական հիւպատոսները մայիսի կէսից գտնվում են Մուշում, ուր սպասում են ռուսաց հիւպատոսի գալուստ, որ ուղարկել է թիւրքիստան Շատ գետուրէ, ի հարկէ, բանակցութիւններ վարել հայ ապստամբների անկազմակերպված կուսակցութիւնների հետ, բայց հիւպատոսների միջամտութիւնը շատ օգուտն ցոյց տուց: Հիւպատոսները հրաման են ստացել ֆիւս Մուշում մինչև որ համոզվեն, թէ նոր ապստամբական շարժումներ այլ ևս չեն լինի:

Այդ համոզմունքը, անշուշտ, կարող է գոյանալ միայն այն ժամանակ, երբ ապստամբութիւնը յարկաւորող պատճառները կը վերացվեն, և կիրականանայ այն միջոցը, ինչ որ մտածել են ռուսաց և աստրիական կաթինէտները, այն է հաստատել հայկական ժամադրմէրիս եւրոպական օֆիցէրների հրամանատարութեան ներքոյ, մակեդոնական ժամադրմէրիս կազմակերպութեան նման:

Այդ փաստը մի լաւ ապացոյց է, որ Ռուսաստանը ամենին անուշադիր չէ թողնելու Մերձավոր Արեւելքի գործերը, ինչպէս յոյս էր տածում թիւրքիան:

Հ. Ա.

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

3 յունիսի

ՄՈՒԿԳԻՆ: (Սեփ. թղթ.): Հակառակորդի ոյժերի մի մասը Պորտ-Արտուրից հեռացնելու համար, Դալիցիսից ուղարկվեց դէպի հարաւ մեր զորաւորները: Յունիսի 1-ին և 2-ին Վաֆանգուրի մօտ զորաբաժինը ստիպված էր կռիւ մղել գերազանց ոյժերի հետ, որի ժամանակ եւրոպացիները մեծ կորուստներ կրեցին: Կուրսի հետեւանքն էր մեր զորութեան բարեկրումը:

ՏՕԿԻՐ: («Րէյտէր»): Յունիսի 1-ին Վաֆանգուրի մօտ տեղի ունեցած պատերազմի մէջ եւրոպացիները, կորցնելով հազար մարդ և շատ թնդանօթներ, յետ բաշկեցին անկարգ փախուստով: Առաւօտեան լրագրողները յունիսի 2-ից հաղորդում են, որ պատերազմը շարունակվում է: Ռուսները մինչև յունիսի 2-ը գործում էին աշողութեամբ. նրանք ոչնչացրին հեծելազորքի մի էսկադրօն, կորցնելով 309 մարդ: Եւրոպական «Նիտակա» կրէյսէրը շատ ֆնաւեց վաղիվօստօկեան էսկադրայի հետ ունեցած կուր մէջ: Առաւօտեան լրագրողները հաղորդում են, որ ռուսական վաղիվօստօկեան նաւերը հեռացան դէպի արեւելք: Մովապետ Տօգօ հաղորդում է, որ եւրոպական ակաւա-յին նաւախուժը մօտեցաւ գիշերը մայիսի 31-ին Պորտ-Արտուրին, ուր նրան աշող-վեց մի քանի ակաւները դնել: Նաւախուժը վերադարձաւ առանց կորուստների: Մայիսի 24-ին, երբ հակա-ակաւանաւորները երկրորդ եւրոպական նաւախուժը և երեք ակաւային նաւեր, եւրոպական հետախուզութիւնը դիւրացնելու նպատակով, ուղարկուեցին Մեւսօ-պինդաօի ափի վրա գտնվող ռուսական զորքերին, Պորտ-Արտուրից յանկարծ դուրս եկաւ «Նօվիկ» կրէյսէրը տարաւ հակա-ակաւանաւոր-րով: Երկու կողմերից ևս թափվեց զօրեղ թնդանօթային կրակ: Եւրոպական նաւախուժը, բերը աշխատում էին, կամաց-կամաց նահանջե-լով, դէպի բաց ծովը գրաւել ռուսական նաւերը, սակայն վերջինները վերադարձան Պորտ-Արտուր գերեզման մօտ երեք ժամին: Եւրոպական կողմից ֆնաւուսներ չը կան: Հէնց այդ օրը «Ձիտօզէ» կրէյսէրի վրա լսեցին թնդա-նօթազգութեան ձայն Պորտ-Արտուրի կողմից:

ՆՕՆԻՐՆ: Կուրսիքի գլխավոր բանակում գտնվող թղթակցից ստացված է հետագիւր, որ հաղորդում է, թէ մեծանում է երկրորդ եւրոպական զորաբաժնի առջև գտնվող ռուսների բանակութիւնը: Երկու պատերազմող ոյժերը մօտենում են միմեանք. սպասվում է պատերազմ: Երկրորդ եւրոպական զորաբաժնի ճակատակողմում կուր չէ տեղի ունեցել: Ռուսները ոչ-մեծ զորաբաժիններով նորից գրաւեցին Տունեանպուլ: Լեւոնյանգուանի ճա-նապարհի վրա, Սուվիչգիլ Լեւոնյանի ճանա-պարհի վրա և Սանյանգիլ Խայլէնի ճանա-պարհի վրա:

ՉԻՅՈՒՆ: (Րէյտէր): Այստեղ եկած ռուս վա-ճառականն ասում է, որ Պորտ-Արտուրը լաւ է մատակարարված մթերքներով: Այստեղ կայ 9000 զուլիս տաւար: Այն առևտրական տունը, որին պատկանում է վերոյիշեալ Վաճառականը, հայթայթեց կառավարութեանը 9000 ֆունտ աղած միս: Վաճառականը հաշւում է Պորտ-Արտուրում 50,000 մարդ:

ՄԻՆՍԿ: Միաժամանակ երեք ահազին հըր-դէններ տեղի ունեցան քաղաքի կենտրոնական մասում: Վնասներն ահազին են: Մյրվում է Բօրիսօվեան գաւառի Սմոլէվիչի աւանը:

ՆԻԻ-ԵՕՐԿ: (Րէյտէր): Մյրված «Մյոկու» շոգենաւի վրա գտնվող ճանապարհորդները մօտաւորապէս հազար հոգուց էին բաղկացած, մեծ մասամբ կանանցից և երեխաներից: Կըր-դենի ժամանակ մօտ հարկեր հողի շուրջը գը-ցեցին իրանց: Շատ դիտելով են կուրս գըց-ված ափը: Մեծամասնութիւնը կրակի զոհ դարձաւ: Գտնված են 306 դիակներ, որոնք այրվել են հրդենի ժամանակ: Չոհերի թիւը հաշուում են հազար հոգի:

ԲԵՆԴՐԱՆ: Թագաւորի ընտրութեան տա-րեդարձը տօնվեց սահմանված ծրագրով: Լրա-գիրները համարում են անցեալ տարին որպէս շատ բաղաւառ և շնորհակալութիւն են յայտ-նում թագաւորին:

ԳՄՈՒՆԻՆԷՆ: Դանիական թագաւորը ճանա-պարհ ընկաւ Վիեննա և հասաւ այնտեղ երե-կոյնան:

ԳԻՄՆԻՑԶԷ: Անգլիական զորաբաժինը բըռ-նեց Լիսապոլից եկող մի լամայի: Նա հաւատաց-նում էր, որ եթէ անգլիացիները մօտենան Լիսապոլին, տիւրքացիները կը դիմադրեն մին-չև վերջին աստիճանը և աւելացրեց, որ դա-լայ-լաման ըրողը պատրաստուեց թիւնները տե-սել է Չինաստան փախչելու համար:

ԲԻԼԻՍԿ: Տեղեկութիւն է ստացված, որ Ալ-տայի բնակիչ մօնգօլների միջև յուզմունքը սկսվեց այն պատճառով, որ սպասում են ի-րանց Այրօտ աստուծո իբր թէ շուտով դա-լայնան, որը պէտք է ազատէ նրանց օտար-ների լուծից և հաստատէ ինքնուրոյն թագա-ւորութիւն: Հազարներով հաւաքվում են մօն-գօլները, երեք անգամ մարդկանց կոչի վրա, որոնք իրանց անուանում են Այրօտի առաջնաներ: Դէպի իրանց վստահութիւն ներշնչելու համար, նրանք ազգում են տգէտ

մօնգօլների վրա հրաշքներով—գանազան ելէկ-տրական և պիւրօտէլնիական ֆօկուսներ ա-նելով, որոնց համար նրանք պատշաճաւոր գործիքներ ունեն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: «Правительственный Вест-НИК» լրագրում տպված է հետեւեալ հաղոր-դագրութիւնը Հէլսինգֆօրսից. «Այսօր, ցե-րեկվայ տառն և մէկ ժամին և հինգ րօպէին գեներալ-ադիւտանտ Բօրիկօվ սենատ մօտե-լու ժամանակ դատիկին վրա վերաւորվեց երկու գնդակներով: Մէկը դիպաւ փորին և ծանր վէրք է, միւսը վզին՝ թեթեւ: Ցանցա-ւորը, սենատոր Շաուսանի որդին, հէնց այդ-տեղ էլ անձնապաշտութիւն գործեց:

ԼԵՆԻՆ: Մայիսի 31-ին եւրոպացիները վաղ առաւօտեան սկսեցին յարձակումը Պու-լանդեանից դէպի Վաֆանգուան գեներալ Շաու-կէլէրգի զորաբաժնի վրա: Կէսօրին որոտա-ցին առաջին ուղիւղութիւնները: Ցերեկվայ մօտ երկու ժամին հակառակորդի ճակատը ու-րոյվեց. նա ձգվում էր տասներկու վերստի վրա Վանդէգուից դէպի հարաւ գտնվող քաղա-րութիւններից մինչև Տասալօ գետը: Եւրոպա-նացիների ոյժերը բաղկացած էին երկու հե-տեակ դիվիզիայից զաշտային և լեռնային արտելէրայով և հեծելազօրքի տասերկու էս-կադրօններից: Երեկոյեան հինգերորդ ժամին մերձք կամաց կամաց կրակ թափելով հե-ռացան դէպի հիւսիս. մեր վերջապահ գուշըր գիշերում էր Վաֆանգուանի մօտ: Դիշերը հան-գիստ անցաւ. յունիսի 1-ին առաւօտեան եւ-րոպացիները յարձակումը վերսկսեց երեք զօ-րախմբերով. առաջինը ընթացում էր Տասալօ գետի հովտով, միջինը—երկաթուղու գծի եր-կարութեամբ և ձախը—կիրճով Վաֆան-գուից: Հակառակորդի գերազանց ոյժերի պատճառով, մեր զորաբաժինը հեռացաւ դէպի այն դիրքը, որ գտնվում է Վաֆանգուից 6 վերստ դէպի հարաւ: Ցերեկվայ երկրորդ ժա-մին եւրոպական արտելէրային սկսեց ուղիւ-կոծել նրա կենտրօնը և ձախ թէւ: Թոյլ թէի վրա էին ուղղված եւրոպական հետեակ զօրքի յամառ յարձակումները, բայց նրանք յետ մղվեցին մեծ կորուստով թշնամու համար: Տաք կուրը դադարեց միջուկում պատճառով: Մեր գիշերեցինք մեր դիրքի վրա, իսկ յունիսի 2-ի առաւօտանից սկսեցինք յարձակումը: Կուրը վերսկսեց և տեղի ամբողջ օրը մեծ յամառութեամբ: Պարզվեց, որ գիշերը եւրո-պացիներին մօտեցել է մէկ դիվիզիայից աւելի օգնական զօրք և այդ բանը հնարաւորութիւն տուեց նրանց շրջապատել մեր աջ թէւը: Կուրը վերջացաւ նահանջումով դէպի Վաֆանգու:

ՄՕՍԿՎԱ: Գաղաքը Հեռաւոր Արեւելք է ու-ղարկում հիւանդանոցների համար մի քանի կազմ և պատրաստ ընտանիքների կարիւնէտներ:

ՕՐԵՕԼ: Այսօր առաւօտեան 8 ժամին Մօսկ-վա-Կուրսիկան երկաթուղու արտակարգ գնաց-քով ժամանեց Օրեւօ կայարանը Մօսկվայի գինւորական շրջանի զօրքերի հրամանատար Մեծ Իշխան Սերգի Ալէքսանդրովիչ իր ամուս-նու՝ Մեծ Իշխանուհի Նիկաւետա Ֆէօդօրով-նայի հետ և կայարանում դիմաւորվեցին նա-հանգապետ կամէրգէր Բալիսանի կողմից: Տա-սերորդ ժամին Նոցա Բարձրութիւնները ան-ցան դէպի Ելեցիան պլատֆօրմը, որտեղից, ձիեր հեծնելով, գնացին զօրահանդէսի դաշ-տը, ուր հրաժեշտ էին տալիս Հեռաւոր Արե-ւելք գնացող 51-դ չէքնիգօվեան զորագունների գնդին, որի շէֆն է Մեծ Իշխանուհին: Ողոր-մած խօսքերով բարեմաղթութիւններ անելով գնդին, Մեծ Իշխանուհին օրհնեց նրան Պօկ-րօվի պատկերով:

ՕՐԵՕԼ: Յունիսի 3-ին, առաւօտեան 10 ժա-մին, Նոցա Բարձրութիւնները ներկայութեամբ մաղթանքից յետոյ օծվեց Օգոստափառ շէֆի կողմից գնդին նուիրված գինւորական եկե-ղեցին:

ՏՕԿԻՐ: («Րէյտէր»): Տէլիսուրի մօտ, Ֆուշ-ժօից դէպի հիւսիս-արեւելք, ռուսները կորց-րին 500 մարդ սպանված և 300 մարդ գերի տարվեցին: Եւրոպացիների կորուստներն են—1000 մարդ: «Միլիտարու» փոխադրող նա-ւը վերադարձաւ Մօշին: Նրա գեկուցումների համեմատ, երէկ, առաւօտեան 11 ժամին, նա հանդիպեց վաղիվօստօկեան էսկադրային: «Միլիտարու» յետ դարձաւ և սկսեց փախ-չել, ազդանշանով նախադուրաջանելով «Կա-նացարկմարու» և «Տուրիմարու» ուրիշ փո-խադրող նաւերին: Երեք նաւերին աշողվեց հեռանալ: Ռուսները նկատեցին «Միտաշիմա-րու» և «Մադօմարու» փոխադրող նաւերը, իւ-րաբանչիւրը 6000 տօն տարողութեամբ: Ռու-սական նաւերը շրջապատեցին նրանց: Փոխա-խադրող նաւերի վիճակը անյայտ է: Ենթա-դրվում է մարդկանց մեծ կորուստ: «Մադօ-

մարու» և «Միտաշիմարու» փոխադրող նաւե-րից ազատվածները յայտնում են, որ այդ նաւերը ջրասոյդ են եղած Ուայտիսէրի ակաւ-ներով:

ՏՕԿԻՐ: («Րէյտէր»): «Միտաշիմարու» և «Մադօմարու» կորուստը անկասկած է: «Մա-դօմարու» ազատված 397 մարդիկ եկան Կօ-կուրա: Մանրամասնութիւններ չը կան: Չը նայելով այն տարածված լուրին, որ եւրոպա-կան էսկադրան վրա է հասել վաղիվօստօ-կեան էսկադրային և կուր է սկսել, սակաւ հաւանականութիւն է ներկայացնում, որ պա-տերազմ տեղի ունեցած լինի: Եղանակի դը-րութիւնը նպաստում է ռուսներին. փոթորիկը և անձրեք ծածկում էին նրանց շարժումները: Ռուսական էսկադրան գնաց դէպի արեւելք. եւրոպացիները հալածում են նրան և անհա-բերութեամբ սպասում են պատերազմի:

ՕՐԵՕԼ: Նոցա կայսերական Բարձրութիւն-ներ Մեծ Իշխան Սերգի Ալէքսանդրովիչ և Մեծ Իշխանուհի Նիկաւետա Ֆէօդօրովնա արժանա-ցրին ընդունել նախաձաշ նահանգապետի մօտ: Նախաձաշից յետոյ Նորին Բարձրութիւնը ճա-նապարհ ընկաւ Ելեցի հրաժեշտ տալու Նէֆի-նեան զորագունների գնդին: Նորին Բար-ձրութիւնը բարեհաճեց ընդունել նահանգա-պետի տանը իր գնդի օֆիցէրներին և գնդա-յին տիկիններին: Չորրորդ ժամին Մեծ Իշխա-նուհին գնաց կայարան, ուղեկցվելով գնդի օ-ֆիցէրներից: Ժամը 4-ին արտակարգ գնաց-քով Մեծ Իշխանուհին ճանապարհ ընկաւ Մօսկվա:

ՉԻՅՈՒՆ: («Րէյտէր»): Եկաւ մի չինացի, որ ծառայում էր Պորտ-Արտուրի նաւաշինարան-ներում. նա ասում է, որ ռուսաց նաւերը դը-րստված են:

ՆԻԻ-ՉԺՈՒՆ: («Րէյտէր»): Երէկ երեկոյեան ժամը 10-ից լսվում է հրացանազգութիւն հա-րաւային ուղղութեամբ: Երկու բաւարեաներ անցան հէս գիշեր քաղաքի միջով: Լուրերին նայելով, Կուրսիքի երկրորդ դիվիզիան յունի-սի 2-ին, երեկոյեան արշաւեց դէպի Գայլժօւ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Յունիսի 2-ին բացվեց բու-ժական սէզօնը Կիւլօօզակի խմբում. լաւ ե-ղանակ էր անում—ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: «Մանջու-րական բանակի հրամանատար գեներալ-ադիւ-տանտ Կուրօպատկինի հեռագրում 1904 թ. յու-նիսի 3-ին. «Գեներալ բարօն Շաուգիլէրգ գիշերվայ ժամը 1 և 20 րօպէին, յունիսի 2-ի գիշերը դէպի 3-ը հեռագրում է հե-տեակը. «Յունիսի 2-ին, մտադրութիւն ու-նէի յարձակվել հակառակորդի աջ թէւի վրա, բայց այն ժամանակ, երբ դրա համար սահ-մանված զօրամասերը աշողութեամբ սկսեցին նեղել հակառակորդի աջ թէւը, եւրոպացիները իրանց կողմից յարձակում գործեցին իմ աջ թէւի վրա գերազանց ոյժերով: Ես ստիպ-ված էի առաջ ընդ իմ բոլոր պահեստի ոյժա, բայց նա բաւական չեղաւ և ես ստիպվեցի նահանջել, երեք ճանապարհով, հիւսիսային ուղղութեամբ: Կուր ժամանակ առաջին ար-տիլէրիական բրիգադայի 3-րդ և 4-րդ բա-տարեանները բառացի կերպով ծածկվեցին եւրոպացիների հետանիւններով. 16 հետա-նիւններից 13 անպէտքացած են և դէն ձգ-ված: Չօրքի վարմունքը ընտիր է. շատ մա-սերը նահանջեցին միայն մի քանի անգամ կրկնված հրամաններից յետոյ:

ԲԻԼԻՍԿ: Լեւոնյան Արտալեյ վերադարձողնե-րը ասում են, որ Ալտայի սարերում ապրող կալմիկների և մօնգօլների սպառած աստուա-ծը յայտնվել է Ուստկանի շրջականերում և բնակում է իւրտում: Ժողովրդին նա չէ երե-կում: Հաղորդակցութիւն ժողովրդի հետ ու-նենում է միայն իրան ծառայող մի քան սպի-տակազգեստ սպասաւոր և մի փոքր աշը-կայ միջոցով: Թէ ինչ է բարոգում այդ առ-տուածը տգէտ մօնգօլների և կալմիկների մէջ, որոնք առաջ կամաւ հաղորդում էին բոլոր նորութիւնները ռուսներին, այժմ ոչինչ չեն ասում և ամեն բան փութկոտութեամբ ծած-կում են: Յայտնի է միայն, որ այդ աստու-ռաման համաձայն, մօնգօլները և կալմիկները չը պէտք է վերցնեն և պահեն իրանց մօտ ու-րիշ գրամ, բայց ոսկուց և արծաթից, որի համար մօնգօլները և կալմիկները ջանք են անում ձեռքից տալ թղթադրամները և հաճու-թեամբ վերցնում են նրանց տեղ ամեն ան-պէտք բան, և դրա պատճառով ռուսները լաւ առևտուր են արել սարերում:

ՀԵՂՄԻՆԳՅՈՐԿ: Յունիսի 3-ին սենատում առաւօտեան ժամը 11 և 5 րօպէին, տնտեսա-կան դեպարտամենտի գահլէժի մուտքում, Ֆինլանդիայի գլխաւոր զարդական վարչու-թեան պաշտօնեայ, սենատում ծառայող Եւգենի

